ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հուլիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

93
(2943)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉՊԵՍ Է ՆԱԽԱՐԱՐԸ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ՄԱՐԵԼ 1 ՄԼՆ ԴՈԼԱՐ ՎԱՐԿԸ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 20-ին՝ համաձայն 2023 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի: Մինչեւ նախարար դառնալը նա եղել է ֆինանսների նախարարի տեղակալ, Ասիական զարգացման բանկի տնօրենի խորհրդական, 2018-2019 թվականներին վարչապետի խորհրդական՝ հասարակական հիմունքներով: Համաձայն կառավարության կայքի՝ Հովհաննիսյանը 2015 թվականից հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, իսկ 2016 թվականին ընտրվել է կուսակցության վերահսկող հանձնաժողովի փոխնախագահ:

Վահե Հովհաննիսյանը 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրում հայտարարագրել է 1 անշարժ գույք՝ այգետնակ, որը ձեռք է բերվել 2020 թվականին եւ գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

ՀՀ ֆինանսների նախարարը հաշվետու տարվա սկզբին հայտարարագրել է 2 մեքենա եւ 1 մոտոցիկլետ: Մեքենաները TOYOTA մակնիշի են՝ 2007 եւ 2006 թվականների արտադրության, ձեռք են բերվել 2015 եւ 2019 թվականներին: Նախարարը մոտոցիկլետը ձեռք է բերել 2012 թվականին, այն 1995 թվականի արտադրության է՝ TRANSALP V600 PD06 մակնիշի: 2006 թվականի արտադրության TOYOTA մակնիշի մեքենան հաշվետու տարում նախարարը վաճառել է 25 մլն դրամով: Տարեվերջին նախարարն ունեցել է 1 մեքենա եւ 1 մոտոցիկլետ:

Նախարար Հովհաննիսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 4 մլն դրամ եւ 4 հազար 937 դոլար, կանխիկ դրամական միջոցները՝ 100 հազար դրամ:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 20 մլն 126 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ֆինանսների նախարարությունից:

Հարկ է նշել, որ Հովհաննիսյանը հաշվետու տարվա եկամուտների մեջ չի հայտարարագրել վաճառված մեքենայի գործարքից ստացած 25 մլն դրամը:

Ֆինանսների նախարարի հանձնված եւ վերադարձված փոխառությունները հաշվետու տարում կազմել են 87 մլն 994 հազար դրամ եւ 27 հազար դոլար:

Վահե Հովհաննիսյանի՝ տարբեր տարիներին ներկայացրած հայտարարագրերի համաձայն՝ նա ունի նաեւ ձեռք բերված բնակարան Կենտրոն վարչական շրջանում: Բանն այն է, որ ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելու ժամանակ, Հովհաննիսյանն ունեցել է 1 մլն դոլար վարկ կամ փոխառություն: 2022 թվականի հաշվետու տարում «ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում 1 մլն դոլարը դեռ առկա էր, սակայն 2023 թվականի հաշվետու տարվա «եկամուտների, ստացված վարկերի եւ փոխառությունների» բաժնում 1 մլն դոլար վարկը անհետացել է՝ գրեթե 400 մլն դրամ եւ ավելի:

Հարցական է, թե մեկ տարում ուր է անհետացել ՀՀ ֆինանսների նախարարի 400 մլն դրամ վարկը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վճռաբեկ դատարանը ուշագրավ որոշում է կայացրել ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանի՝ Ալրաղացի Լյովիկի գործով: Մեզ հայտնի դարձավ, որ Վճռաբեկ դատարանը նրա ազգականի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է, իսկ Ալրաղացի Լյովիկի գործով նոր քննություն է սկսում: Ամեն ինչ մասին՝ ամենասկզբից. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, մեղադրանք էր առաջադրել այն բանի համար, որ վերջինս իր մտերիմ Ա. Կ.-ի եւ ՀՀ ոստիկանության նախկին աշխատակից Ա. Ն.-ի միջոցով կազմակերպել է 2008 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ մաքսային կոմիտեի նախկին ղեկավար Արմեն Ավետիսյանի նկատմամբ, հանցավոր համագործակցության կողմից, առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 45 միլիոն ՀՀ դրամ արժեքով գույքի հափշտակություն կատարելու նպատակով իրականացված ավազակային հարձակումը: Նույն հանցագործությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակով օժանդակելու համար՝ մեղադրանք է առաջադրվել նաեւ Լեւոն Սարգսյանի ազգական Սուրեն Ղազարյանին: Քրեական գործի նախաքննության ընթացքում Լ. Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, եւ նա մինչ օրս գտնվում է ԱԱԾ-ի մեկուսարանում: Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը Ալրաղացի Լյովիկին դատապարտել էր ազատազրկման՝ 9 տարի ժամկետով, իսկ նրա ազգական Սուրեն Ղազարյանին՝ 8 տարվա ժամկետով: Այս որոշման հետ Լեւոն Սարգսյանը չհաշտվեց ու որոշումը բողոքարկեց ՀՀ վերաքննիչ դատարանում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը աշնանը մեծ թափով կվերսկսի փողոցային պայքարը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը նախատեսում է սեպտեմբերի 2-ից սկսել իշխանափոխության պահանջով հանրահավաքներն ու բողոքի ակցիաները: Սրբազանն այս օրերին շարժման ձեւաչափի եւ անելիքների հետ կապված հարցեր քննարկելու համար ակտիվորեն հանդիպումներ, քննարկումներ է ծավալում քաղաքական տարբեր ուժերի եւ այլ ոլորտների ներկայացուցիչների հետ: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ Բագրատ Սրբազանը թե՛ իր մտերիմների շրջապատում, թե՛ քաղաքական ուժերի հետ հանդիպումների ժամանակ հայտարարել է, որ չի սպասելու 2026 թվականի հերթական ընտրություններին, քանի որ օրեցօր իրավիճակն ավելի է բարդանում, իշխանություններն առանց երկմտելու նոր տարածքներ են հանձնում, երկրի սահմանները գնալով փոքրանում են. ուստի մինչեւ հերթական ընտրություններին սպասելը կարող է աղետալի լինել Հայաստանի համար: Սրբազանը հայտարարել է՝ ամեն ինչ անելու է, որ ճնշման ներքո իշխանությունները արտահերթ ընտրությունների գնան, այսինքն՝ Բագրատ Սրբազանի օրակարգում արտահերթ ընտրություններն են: Կարող ենք թերեւս արձանագրել, որ աշունը հայաստանյան քաղաքական դաշտում թեժության պակաս չի ունենա:

Վերջին շրջանում՝ տուրիստական սեզոնի ակտիվացմանը զուգահեռ, բացի դեսպանատներից՝ հանգստի մեկնողների համար ահռելի խնդիրներ են առաջացրել ՀՀ անձնագրային կետերը: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը քաղաքացիներից բազմաթիվ ահազանգներ է ստանում առ այն, որ Երեւանի անձնագրային կետերում, որտեղ հերթագրման համակարգ է գործում, ամիսներով տեղեր չկան՝ դիմումներ ընդունելու եւ անձնագրեր փոխելու: Ստացվում է, որ նոր ներդրված էլեկտրոնային համակարգն իրեն չի արդարացրել: Երեւանում իրենց հերթին անհույս սպասող հանգստի մեկնողների այլընտրանք դառնում են մարզային անձնագրային կետերը, սակայն այստեղ խնդիրն այլ է. մարզերում չեն գործում էլեկտրոնային հերթագրման համակարգեր: Բացի սրանից՝ մեծ խնդիր է առաջացրել անձնագրայինների միացման հարցը, օրինակ՝ Չարենցավանի անձնագրայինի միացումը Հրազդան քաղաքի անձնագրայինին: Դիցուք՝ անձնագրային մի կետում օրական գրանցման քանակը 50-ն է, 50 տեղի լրանալուց հետո՝ քաղաքացիներն այլեւս հերթի մասնակից դառնալու հույս չունեն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ Է ԱՆԵՆ»

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը ՀՀ ՀՈՒ ԳՇ նախկին ղեկավար Մովսես Հակոբյանն է:

-Պարոն Հակոբյան, Տավուշում, կարծես, ավարտել են սահմանազատումը, որի հետեւանքով Կիրանց գյուղը կիսվել է, մի շարք բնակավայրեր ու հողատարածքներ Ադրբեջանի վերահսկողության տակ են հայտնվել: Հետեւում եք՝ ինչ է կատարվում Տավուշում, ըստ Ձեզ՝ ի՞նչ զարգացումներ են այնտեղ սպասվում:

-Ինձ չի հետաքրքրում՝ ինչ է կատարվում: Ես դրա մասին խոսել եմ, որ այս ամենը նոյեմբերի 9-ի փաստաթղթի հետեւանք է: Ինչ-որ մեկը հետեւություն արե՞լ է դրանից:

-Այս օրերին քաղաքացիները ակցիաներ են իրականացնում, պահանջում են իշխանափոխություն՝ այսպիսով իրենց դժգոհությունն արտահայտելով երկրում տեղի ունեցող գործընթացների մասով. եթե հետեւություն արած չլինեին, իշխանության հեռացումը կպահանջեի՞ն:

-Իհարկե՝ ոչ, եթե հետեւություն արած լինեին, չէին գնա ու ընտրեին Նիկոլ Փաշինյանին:

-Պարոն Հակոբյան, ըստ Ձեզ, էլի՞ մարզեր կան, որոնց նույն ճակատագիրն է սպասվում՝ ինչ Տավուշում եղավ:

-2020 թվականի հունվար կամ փետրվար ամսին ձեր օրաթերթին հարցազրույց եմ տվել հիշյալ հարցի առնչությամբ, այնտեղ ամեն ինչ ասել եմ:

-Նիկոլ Փաշինյանը վերջերս գնացել էր Սյունիք ու այնտեղ հայտարարեց, որ հաջորդը Սյունիքն է լինելու:

-Ոչ միայն Սյունիքն է լինելու, ինչպես բազմիցս ասել եմ....Չկրկնեմ:

-Պարոն Հակոբյան, ըստ Ձեզ, այն, ինչ մեզ հետ կատարվում է, պատերազմում կրած պարտության հետեւա՞նք է, թե՞ իշխանությունների ապաշնորհության, կամ մտադրվա՞ծ են գուցե այսպես անում:

-Ազգային մենթալիտետի արդյունք է. իսկ իշխանությունները մեր ազգի պատկերն են:

-Այսօր նաեւ զինվորականներն են լուռ, այդ թվում՝ Տավուշի գեներալները, առանց որեւէ խոսք ասելու՝ հետեւում են, թե ինչպես է մարզը կիսվում, Ձեզ համար նրանց այս պահվածքը հասկանալի՞ է:

-Ազգի սերուցքն են:

-Պարոն Հակոբյան, իսկ Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժմանը հետեւո՞ւմ եք, կիսու՞մ եք Սրբազանի տեսակետները:

-Ես Բագրատ Սրբազանին հարգում, սիրում եմ, այն, ինչ որ պետք է, ասել եմ նրան:

-Ե՞րբ եք հանդիպել:

-Շատ շուտ:

-Իսկ ի՞նչ եք ասել նրան:

-Կարեւոր չէ նշել, ինչ պետք է՝ իրեն եմ ասել:

-Պարոն Հակոբյան, իսկ ինչո՞ւ չեք մասնակցում շարժման հանրահավաքներին:

-Ով է ասում՝ չեմ մասնակցում:

-Դե, երբեւէ հանրահավաքներին Ձեզ չենք տեսել:

-Ես էլ ձեզ չեմ տեսել, ուրեմն դո՞ւք էլ չեք մասնակցել...:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ՉԵՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ ԴԻՐՔ ԲԱՐՁՐԱՆԱԼ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Հունիսի 17-ին գրություն էի ուղարկել ՊՆ՝ ՁՈՒ մի քանի ուղղություններով այցս կազմակերպելու նպատակով:

Ընդ որում, ընտրել էի ուղղություններ, որոնք, այսպես ասած, խնդրահարույց չէին ո՛չ քաղաքական, ո՛չ մեկ այլ առումով:

ՊՆ-ն գրությանս արձագանքել է 22 օր հետո՝ հուլիսի 9-ին, երբ գրությամբ նախատեսված ժամկետներն անցել էին ու այդ հիմքով մերժել՝ «նշված ժամանակահատվածում տվյալ ուղղություններ Ձեր այցերի կազմակերպումը հնարավոր չէ» պատճառաբանությամբ:

Նշեմ, որ եղել են փուլեր, երբ ՊՆ-ն նույնիսկ նման իրավիճակներում ճկունություն դրսեւորել է, սակայն հիմա առաջնագիծ այցերս մերժելու անհեթեթ «հիմք» է գտել:

Մի մերժում էլ մայիսին է եղել (ավելի վաղ գրված ու չմերժված գրությամբ), սակայն մտածել եմ՝ տեխնիկական է, որոշակի հանգամանքների բերումով:

Կպնդի՞ ՊՆ-ն, որ թեման տեխնիկական է կամ թյուրըմբռնում, մի քանի օր դեռ ժամանակ ունի, իսկ թեմային այլ շերտերով ու երանգներով կանդրադառնամ ավելի ուշ՝ որոշ դետալային ճշտումներից հետո»:

ԱԿՑԻԱ՝ ՄԱԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄՈՏ

Արցախցիները ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի դիմաց ակցիա են կազմակերպել՝ ի կատարումն ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2021թ. դեկտեմբերի 7-ի եւ 2023թ. նոյեմբերի 17-ի որոշումների:

Նշենք, որ 2021 թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել էր «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի համատեքստում քննվող՝ «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործի շրջանակում Հայաստանի Հանրապետության ներկայացրած հայցի հիման վրա հրատապ միջոցներ կիրառելու մասին որոշումը՝ ի թիվս այլ հարցերի պարտավորեցնելով Ադրբեջանի Հանրապետությանը «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու եւ պատժելու վանդալիզմի ու պղծման գործողությունները՝ ուղղված հայկական մշակութային ժառանգության, ներառյալ՝ եկեղեցիների եւ այլ պաշտամունքի վայրերի, հուշարձանների, տեսարժան վայրերի, գերեզմանատների եւ արտեֆակտերի դեմ»:

Դատարանը 2023թ. նոյեմբերի 17-ին հրապարակել է նոր որոշում առ այն, որ Ադրբեջանը պարտավոր է ապահովել սեպտեմբերի 19-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով ԼՂ-ից մեկնած անձանց անարգել եւ անվտանգ մուտքը կամ ելքը Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանը պարտավոր է ապահովել ցանկացողների վերադարձը, ինչպես նաեւ նրանց ապահով ապրելու հնարավորությունը իրենց բնակավայրում՝ առանց սպառնալիքների:

Միջազգային դատարանը նաեւ պարտավորեցրել էր Ադրբեջանին պահպանել, չոչնչացնել ԼՂ բնակիչների սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲԱՅՐԱՄՈՎԸ՝ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը մեկնել է Վաշինգտոն՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին:

Երկրի ԱԳՆ-ից հայտնում են, որ այցի շրջանակում նախատեսվում է Բայրամովի մասնակցությունը ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին, ինչպես նաեւ բարձր մակարդակի մի շարք երկկողմ հանդիպումներ:

Նախօրեին ՀՀ ԱԳՆ-ն հաղորդել էր, որ հուլիսի 9-10-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Վաշինգտոնում, որտեղ կմասնակցի ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի՝ գործընկերների ձեւաչափով միջոցառմանը եւ կազմակերպության 75-ամյակին նվիրված հարակից միջոցառումներին: Ծրագրված են նաեւ երկկողմ հանդիպումներ:

ԱԺ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Այսօր (խմբ.) ԱԺ գլխադասային հանձնաժողովները նիստեր կանեն:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հուլիսի 10-ին՝ ժամը 10:00-ին, 114 սրահում կկայանա Ֆինանսավարկային ու բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը նիստ կանի նույն օրը՝ ժամը 11:00-ին:

Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստը տեղի կունենա հուլիսի 10-ին՝ ժամը 12:00-ին:

ԵԱՏՄ ԽՈՐՀՐԴԻ 6-ՐԴ ՆԻՍՏԸ

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի նախագահությամբ հուլիսի 8-ին ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում կայացել է ԵԱՏՄ արդյունաբերական քաղաքականության խորհրդի 6-րդ նիստը: Այս մասին հայտնում են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից:

«Կարեւոր է մշակել այնպիսի ընդհանուր մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն արդյունաբերական հատվածի աջակցմանը, նորարարության խթանմանը, տեխնոլոգիական արդիականացմանն ու ապրանքների մրցունակության բարձրացմանը»,- ողջույնի խոսքում նշել է Գեւորգ Պապոյանը:

Նիստի ընթացքում քննարկվել են մինչեւ 2030 թ. ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունները:

Օրակարգային հարցերի թվում էին ռոբոտաշինության զարգացման, արդյունաբերական ռոբոտների արտադրության եւ ներդրման միջպետական ծրագրի մշակման հնարավորությունը, ինչպես նաեւ ԵԱՏՄ արդյունաբերության ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման ընթացքում տրամադրվող ֆինանսական աջակցությանը վերաբերող հարցեր:

Նիստի արդյունքներով ստորագրվել է նիստի արձանագրությունը:

ԱՄՆ-Ն ՎՐԱՍՏԱՆՈՒՄ «ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»

ԱՄՆ-ն «վճռական է հոկտեմբերի 26-ին Վրաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների արդյունքներով երկրում իշխանափոխության հասնելու գործում». այս մասին, «ՌԻԱ Նովոստիի» փոխանցմամբ, հայտնել է ՌԴ արտաքին հետախուզության ծառայությունը՝ վկայակոչելով իր տվյալները:

«Ջո Բայդենի վարչակազմն արդեն մշակել է լայնածավալ տեղեկատվական արշավ՝ իշխող «Վրացական երազանք» կուսակցությանը վարկաբեկելու համար», - ասվում է գերատեսչության հաղորդագրությունում:

Ըստ ՌԴ հետախուզական ծառայության՝ ամերիկացի «համակարգողները» Վրաստանում ընդդիմադիր ուժերին «արդեն հրահանգել են սկսել երկրում բողոքի ցույցերի ծրագրումը՝ կապված ընտրությունների հետ»: Ընդ որում, ըստ ռուսական կողմի պնդման, «իշխանափոխության հիմնական շարժիչ ուժը պետք է լինի Թբիլիսիի բնակչությունը»:

«Վաշինգտոնը ծրագրում է այս բոլոր իրադարձությունների հիմքում դնել հակառուսական գաղափարախոսությունը՝ Մոսկվային մեղադրելով Վրաստանի բոլոր դժբախտությունների համար: Շեշտը դրվելու է «Վրացական երազանք»-ի «քաղաքական անկախության բացակայության» մեղադրանքների վրա: Հակակառավարական տրամադրություններ հրահրելու գործում առանցքային դերը պետք է կատարի Վրաստանի նախագահ Զուրաբիշվիլին: Ինչպես պլանավորել են «վաշինգտոնյան ռեժիսորները»՝ պետության ղեկավարը հարցազրույց կտա ամերիկյան լրատվամիջոցներից մեկին եւ Վրաստանի կառավարությանը կմեղադրի ԵՄ-ին Թբիլիսիի անդամակցության բանակցային գործընթացի «դեգրադացիայի» համար, հասարակությանը կզգուշացնի Մոսկվայի հետ մերձեցման աղետալի հետեւանքների եւ Ռուսաստանից վերաբնակիչների կողմից Վրաստանին հասցված վնասի մասին», - նշված է հաղորդագրությունում:

ՍԻՄՈՆՅԱՆԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը չի մասնակցի հուլիսի 12-ին Սանկտ Պետերբուրգում կայանալիք Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) միջխորհրդարանական վեհաժողովին: Այս մասին հայտնել է ՀՀ ԱԺ նախագահի օգնական Մովսես Հարությունյանը:

«Հարգելի՜ գործընկերներ, ձեր հարցումներին ի պատասխան՝ տեղեկացնում եմ, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի մասնակցի հուլիսի 12-ին Սանկտ Պետերբուրգում կայանալիք ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովին»,- նշված է Հարությունյանի գրառման մեջ:

ՏԵՍԱԿԵՏ

ԶԱՏՈՒԼԻՆԸ՝ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՀՀ իշխանությունների հայտարարությունն այն մասին, որ «Ռուսաստանը հանձնել է Ղարաբաղը, սուտ է եւ ուղղված է Ղարաբաղի հանդեպ գործած սեփական դավաճանության, Արեւմտյան ճամբար անցնելու որոշման արդարացմանը», - այս մասին ասել է Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինը:

Միեւնույն ժամանակ նա խոստովանել է, որ ռուսական կողմն ամեն ինչ չէ, որ ճիշտ է արել:

«Պարոն Արմեն Գրիգորյանը (ԱԽ քարտուղար) իր աղմկահարույց հայտարարությամբ Ռուսաստանին վերագրեց Լեռնային Ղարաբաղի կորստի, հանձնման պատասխանատվությունը. Ռուսաստանը հայտնվեց շատ բարդ, ես կասեի՝ հիմար վիճակում, քանի որ կողմերի, նախեւառաջ՝ հայկական կողմի խնդրանքով Ղարաբաղում տեղակայելով իր խաղաղապահներին՝ Մոսկվան հետագայում չստացավ նույն խաղաղապահներին գործելու հնարավորություն տվող մանդատ: Եվ ամենակարեւորը, 2022 թվականին Հայաստանի վարչապետն արեւմտյան մայրաքաղաքներում հրապարակավ հայտարարեց, որ Ղարաբաղը Ադրբեջանի ներքին խնդիրն է»,- ասել է Զատուլինը:

Նրա կարծիքով՝ «նոր պատերազմ կանխելու, խաղաղության հասնելու, հարաբերությունները վերաձեւակերպելու պատրվակով Փաշինյանը պարզապես լքել է Ղարաբաղի իր հայրենակիցներին»:

«Այն, ինչ տեղի ունեցավ հետո՝ 2023 թվականին, սրա հետեւանքն էր: Ռուսաստանն ու ռուս խաղաղապահները հայտնվեցին շատ հիմար վիճակում՝ գտնվելով Ղարաբաղում եւ միեւնույն ժամանակ այն տարածքում, որը Հայաստանն ինքը պաշտոնապես ճանաչեց Ադրբեջան: Ի՞նչ կարող էին նրանք անել այս իրավիճակում: Կարծում եմ՝ կարելի է ամեն տեսակի թերացում գտնել ոչ միայն խաղաղապահների աշխատանքում, այլեւ ընդհանրապես Անդրկովկասում Ռուսաստանի գործողություններում, բայց ասել, որ Ռուսաստանը տվել է Ղարաբաղը, անշուշտ, սուտ է»,- ընդգծել է Զատուլինը:

Նրա պնդմամբ՝ Փաշինյանն իր ամբողջ հասարակական, ապա քաղաքական կարիերայի ընթացքում երբեւէ կասկած չի առաջացրել այն հարցում, որ չի դասվում հանուն Ղարաբաղի, հայ ժողովրդի ազգային գաղափարների պայքարելու պատրաստ մարդկանց շարքին:

«Այո, եղել է մի շրջան, երբ Փաշինյանը եկել է իշխանության եւ ստիպված է եղել հայրենասեր ձեւանալ: Նա դա արեց: Նա մինչեւ անգամ հայտարարեց, որ «Ղարաբաղը Հայաստան է, եւ վերջ»: Եվ մի կողմից իր ելույթներով, մյուս կողմից՝ գործողությունների բացակայությամբ, Ադրբեջանի համար լրացուցիչ առիթ ստեղծեց այդ իրավիճակից օգտվելու համար: Եվ նա օգտվեց: Ես չեմ կարծում, որ այդ պահին մեր կողմից ամեն ինչ ճիշտ էր արված, եւ որ 2020 թվականին մենք ամեն ինչ արեցինք, որ այս պատերազմը տեղի չունենա: Բայց այն սկսվելուց հետո, գիտեք, նախագահ Պուտինը փորձեց կասեցնել այն: Եվ կրկին պարոն Փաշինյանը հրաժարվեց դադարեցնել ռազմական գործողությունները, քանի որ, երբ Շուշին վերցնելու մասին խոսք դեռ չկար, հիշում եք այդ դրվագը, նա համարում էր, որ «Հայաստանն ինքը գլուխ կհանի այս իրավիճակից»»,- նշել է Զատուլինը:

Վերջինիս համոզմամբ՝ «Ռուսաստանը շահագրգռված էր, որ Ղարաբաղի հայերն ապրեին իրենց տեղերում, որպեսզի Ղարաբաղը որոշակի պայմաններում անկախություն ձեռք բերեր, եթե ոչ անկախություն, ապա գոնե պահպաներ այնպիսի կարգավիճակ, որը թույլ կտար հայերին ապրել այնտեղ խաղաղ եւ հանգիստ»:

«Ես միանգամայն վստահ եմ, որ, այո՛, դա Ռուսաստանի շահն էր»,- նշել է նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

6 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, 22 ՄԼՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 19-ին:

Մինչեւ փոխվարչապետ դառնալը Խաչատրյանը եղել է ՀՀ էկոնոմիկայի նախարար, Միջազգային էներգետիկ կորպորացիա ՓԲԸ-ի խորհրդի անդամ, ֆինանսների նախարար:

Փոխվարչապետը 2023 թվականի՝ անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրում հայտարարագրել է 6 անշարժ գույք՝ 2 հողամաս, 1 բնակարան, 1 անհատական բնակելի տուն, 1 ավտոտնակ եւ 1 այգետնակ:

Բոլոր գույքերը Խաչատրյանը հայտարարագրել է համատեղ սեփականությամբ:

2 հողամասերից մեկը գտնվում է Դիլիջան քաղաքում, ձեռք է բերված 2007 թվականին, 2-րդ հողամասը գտնվում է Ջրվեժ գյուղում, ձեռք է բերված 2019 թվականին՝ հեղափոխությունից հետո:

Բնակարանը գտնվում է Երեւանի Կենտրոն վարչական շրջանում եւ ձեռք է բերված 2016 թվականին, իսկ անհատական բնակելի տունը գտնվում է Ջրվեժ գյուղում եւ 2009 թվականին է ձեռք բերվել: Այգետնակը կրկին գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, իսկ ավտոտնակը՝ Ջրվեժ գյուղում, համապատասխանաբար ձեռք են բերված 2008 եւ 2019 թվականներին:

Տիգրան Խաչատրյանը հաշվետու տարվա ընթացքում որեւէ անշարժ գույք ձեռք չի բերել:

Որպես տրանսպորտային միջոց՝ փոխվարչապետ Խաչատրյանը հայտարարագրել է 2014 թվականի արտադրության MAZDA մակնիշի մեքենա՝ գնված 2021 թվականին:

Փոխվարչապետի բանկային ավանդները կազմել են 15 հազար դոլար, բանկային հաշիվների մնացորդները՝ 4 մլն 180 հազար դրամ եւ 20 հազար դոլար, կանխիկ դրամական միջոցները կազմել են 10 հազար դոլար:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 22 մլն 225 հազար դրամ, որից 22 մլն 052 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ վարչապետի աշխատակազմից, իսկ 448 դոլարը փոխառություն է «Ամերիաբանկ»-ից:

Փոխվարչապետը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկեր կամ այլ փոխառություններ չի հայտարարագրել:

Հավելենք, որ Տիգրան Խաչատրյանի որդին՝ Դավիթ Խաչատրյանը եւ նրանց հետ համատեղ բնակվող Էլեն Խաչատրյանը, աշխատում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեում որպես գլխավոր եւ ավագ մասնագետներ:

Փոխվարչապետի մյուս որդին՝ Մուշեղ Խաչատրյանը, աշխատում է «ԱԿԲԱ» բանկում՝ որպես բաժնի ղեկավար, իսկ համատեղ բնակվող Սյուզաննա Բաբաջանյանը՝ «Էյչ Էս Բի Սի» բանկ Հայաստանում՝ որպես տնտեսագետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՇԱՌՔ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տվյալների հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Ա. Վ.-ն., զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության տարածքային ստորաբաժանումներից մեկի զորակոչի բաժնի պետի պաշտոնը, ՊՆ մեկ այլ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Հ.-ի եւ ՊՆ մի շարք այլ պաշտոնատար անձանց հետ խմբի կազմում, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նկատմամբ ունեցած ազդեցությունն օգտագործելու եղանակով, զորակոչի ենթակա անձանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու կամ զորակոչը հետաձգելու համար նրանց հարազատներից պահանջել եւ ստացել են խոշոր ու առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 50.000 ԱՄՆ դոլար կաշառք: Այս մասին տեղեկացնում են Հակակոռուպցիոն կոմիտեից:

«Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ Ա. Վ.-ն, վերը նշված անձանց հետ նախնական համաձայնությամբ, ձմեռային զորակոչի ենթակա զորակոչիկի զինվորական ծառայության մեկնելը 6 ամսով անխոչընդոտ հետաձգելու համար՝ 2024 թվականի հունվարին վերջինիս ազգականից պահանջել եւ ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 25.000 ԱՄՆ դոլար կաշառք: Արդյունքում՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, զորակոչիկին տրամադրվել է տարկետում մեկ տարի ժամկետով:

Քրեական վարույթով կատարված ապացուցողական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է նաեւ, որ Ա. Վ.-ն եւ ՊՆ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Հ.-ն, ՊՆ մեկ այլ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ս. Հ.-ի եւ վերջինիս վարորդ Գ. Գ.-ի օժանդակությամբ, եւս մեկ զորակոչիկի զինվորական ծառայությունից անխոչընդոտ ազատելու համար վերջինիս հորից որպես կաշառք պահանջել եւ ստացել են առանձնապես խոշոր չափերով՝ 15.000 ԱՄՆ դոլար: Արդյունքում՝նշված զորակոչիկը Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից:

Բացի դրանից՝ Ա. Վ.-ն, մեկ այլ զորակոչիկի պարտադիր զինվորական ծառայությունից անխոչընդոտ ազատելու համար, իր ծանոթից 2024 թվականի հունվարի 19-ին ընդունել է խոշոր չափերով՝ 5.000 ԱՄՆ դոլար գումար կաշառք տալու առաջարկը, որից հետո նշված զորակոչիկը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, ճանաչվել է սահմափակ պիտանի, եւ այդ հիմքով՝ վերջինիս պարտադիր զինվորական ծառայության մեկնելը հետաձգվել է մինչեւ հաջորդ զորակոչ:

Պարզվել է նաեւ, որ Ա. Վ.-ն Ա. Հ.-ի եւ ՊՆ տարածքային ստորաբաժանման ակնաբույժ Լ. Հ.-ի հետ, ձմեռային զորակոչի ենթակա մեկ այլ զորակոչիկի զինվորական ծառայությունից անխոչընդոտ վերջնական ազատելու համար, 2024 թվականի հունվարին զորակոչիկի հորից որպես կաշառք պահանջել եւ ստացել է 5.000 ԱՄՆ դոլար, որից հետո ՊՆ Կենտրոնական տարածքային հանձնաժողովի կողմից զորակոչիկը ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

Խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու համար ՊՆ տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժնի պետ Ա. Վ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով /երկու դրվագ/, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով:

Կաշառք ստանալու, տալու եւ կաշառք տալուն օժանդակելու համար նախաքննության ընթացքում մեղադրանքներ են ներկայացվել եւս 8 անձի, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ Ա. Հ.-ին եւ Ս. Հ.-ին:

Մեղադրյալներից 4-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

9 մեղադրյալների վերաբերյալ քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննվելու համար»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՈՐԾԸ

ԳՈՒՅՔԸ ԿԲՌՆԱԳՐԱՎՎԻ ԵՎ ԿՎԱՃԱՌՎԻ

Հայաստանում հարուցված քրեական գործի շրջանակու Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության արդյունքում՝ ԱՄՆ իրավասու դատարանի որոշմամբ հանցավոր ծագում ունեցող գույք դիտարկվող՝ ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի ընտանիքին պատկանող ԱՄՆ Լոս Անջելեսում գտնվող առանձնատունը կբռնագրավվի եւ ամենաբարձր շուկայական արժեքով կվաճառվի:

Առանձնատան իրացման արդյունքում ստացված դրամական միջոցների գերակշիռ մասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու հարցի շուրջ Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմնի միջեւ բանակցություններ են ընթանում:

Հիշեցնենք, որ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործով Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյանների նկատմամբ իրականացվում է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ փողերի լվացման մեղադրանքով (Արտյոմ Խաչատրյանի վերաբերյալ գործն ուղարկվել է դատարան, Գուրգեն Խաչատրյանի նկատմամբ հայտարարված է հետախուզում), իսկ Գագիկ Խաչատրյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու, փողերի լվացմանը հանցակցելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու վերաբերյալ գործը ներկայում քննվում է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում:

Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ հետեւողական համագործակցության արդյունքում համապատասխան դատական գործընթաց էր նախաձեռնվել նաեւ ԱՄՆ իրավասու մարմինների կողմից:

Արդյունքում՝ 2024 թվականի հունիսի 14-ին Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյանները, որոնց պատկանող գույքն անցնում է նաեւ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով, ԱՄՆ շրջանային դատարան էին ներկայացրել գույքի բռնագրավման կապակցությամբ համաձայնություն ձեռք բերելու խնդրանք, որը դատարանի կողմից վարույթ էր ընդունվել:

Դատարանի՝ 2024 թվականի հունիսի 30-ի որոշմամբ՝ համաձայնությունը հաստատվել է:

Քրեական վարույթներից բացի՝ Հակակոռուպցիոն դատարանում քննվող՝ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի շրջանակում ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 25 անձանցից՝ ներառյալ որդիներ՝ Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյաններից, պահանջվում է բռնագանձել 210 անշարժ գույք, 13 տրանսպորտային միջոց, մասնակցություններ 29 իրավաբանական անձերում, նաեւ ավելի քան 33 միլիարդ դրամ:

ԼՈՒՐԵՐ

Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ԱԶԱՏՎԵՑ ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ

ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը մեղավոր ճանաչվեց, սակայն ազատվեց պատժի կրումից որոշ հոդածներով՝ համաներմամբ, որոշ հոդվածներով՝վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Դատավճիռը հրապարակեց ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանը:

Վլադիմիր Գասպարյանից կգանձվեն դատական ծախսերը՝ 200 հազար դրամ:

Քրեական այս գործով կա 4 մեղադրյալ՝Վլադիմիր Գասպարյանը, ՀՀ նախկին փոխոստիկանապետ Լեւոն Երանոսյանը, ոստիկանության ներքին աուդիտի վարչության նախկին պետ Վարդան Թունյանը, ոստիկանության զորքերի զորամասի նախկին հրամանատար Գուրգեն Գրիգորյանը: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

Հանրային մեղադրողը 11 տարվա ազատազրկում էր պահանջում ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի համար:

Հիշեցնենք՝ 2023 թ. հուլիսին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հաղորդագրություն տարածեց, ըստ որի ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն օրինականացրել (լվացել) է հանցավոր ճանապարհով ստացված ընդհանուր շուրջ 2 մլրդ դրամի գույք:

ՈՐՈՇՈՒՄ՝ «ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂ» «ՊԶՈՅԻ» ԳՈՐԾՈՎ

Օրենքով գող» Արմեն Ղազարյանի՝ «Պզո»-ի վերաբերյալ քրեական գործն արդեն դատարանում է: Վերջինս երեկ անձամբ էր ներկայացել Երեւան քաղաքի Աջափնյակի նստավայր, սակայն նիստը հետաձգվեց, քանի որ դատախազը առողջական խնդիրների պատճառով չէր ներկայացել դատարան. նրա քրեական գործը քննում է Երեւանի քրեական դատարանի դատավոր Վահե Ջիվանյանը:

Նշենք, որ Արմեն Ղազարյանը մեղադրվում է «օրենքով գողի» կարգավիճակը պահելու մեջ: Նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով: Ըստ քրեական վարույթի՝ 1991 թվականին Արմեն Ղազարյանը Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ներկայությամբ «թագադրվելով»՝ ստացել է «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ եւ 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ շարունակել է պահպանել օրենքով չթույլատրվող այդ կարգավիճակը: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը եւ գրավը՝20 մլն դրամի չափով:

Քրեական գործը դատարան մուտքագրվել է երեկ եւ մակագրվել Երեւանի քրեական դատարանի դատավոր Վահե Ջիվանյանին: Ի դեպ, Ջիվանյանն օրերս է Սյունիքի մարզի դատարանից տեղափոխվել Երեւանի դատարան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 8-ից հուլիսի 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 121դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԽԱԽՏՎԵԼ Է

Տավուշի մարզկենտրոն Իջեւանը Բերդ քաղաքին կապող, Տավուշի սահմանագոտին շրջանցող Գանձաքար-Իծաքար-Նավուր-Բերդ ավտոճանապարհի մաս կազմող, 35 կմ երկարություն ունեցող Գանձաքար-Իծաքար ճանապարհի հիմնանորոգումը սկսվեց 2022 թվականին, շինարարությունը նախատեսվում էր ավարտել 2023 թվականի սեպտեմբերին, այդ նպատակով պետական բյուջեից նախատեսված էր հատկացնել 4,5 միլիարդ դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացնում էր «Խաչիար» ՍՊԸ-ն: 2022 թվականին այդ ընկերությունը ճանապարհի 6 կիլոմետրանոց հատվածում թույլ գրունտի վրա ասֆալտապատում էր կատարել, ասֆալտը քանդվել էր, ընկերությունը այդ հատվածում նորից էր ասֆալտապատում արել: Ճանապարհի շինարարության պայմանագրի ժամկետը խախտվել է, կառավարությունը խզել է «Խաչիար» ընկերության հետ պայմանագիրը, նշված ճանապարհի կառուցապատման համար նոր մրցույթ հայտարարել: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ ներկայումս ո՞ր կազմակերպությունն է իրականացնում այդ ճանապարհի կառուցապատումը, աշխատանքների քանի՞ տոկոսն է արված, ե՞րբ շահագործման կհանձնվի կարեւոր այդ ավտոճանապարհը: Մարզպետարանից պատասխանել են. «Գանձաքար- Իծաքար ավտոճանապարհի կառուցապատումը իրականացվում է «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպության կողմից, որն իրականացրել է Իծաքար-Հախում գետի հատվածի հողային աշխատանքները, ճանապարհի կառուցապատման ավարտի վերաբերյալ դիմեք կապալառու կազմակերպությանը»: Նավուր գյուղից տեղեկացանք, որ «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպությունը Վայքից է, այն այս տարվա գարնանից հողային աշխատանքներ է կատարում: Գանձաքար-Իծաքար ճանապարհի կառուցման նոր ժամկետ է սահմանվել 250 օրը, այսինքն՝ այս տարի ռազմավարական նշանակության ճանապարհը պետք է գործարկվի: Սակայն տարին արդեն կիսվում է, շինաշխատանքների զգալի մասը մնում է, դժվար թե շինարարական կազմակերպությունը կարողանա տեղավորվել սահմանված ժամկետում: Գանձաքարի վարչական ղեկավար Վարդգես Դովլաթբեկյանը հայտնեց, որ ճանապարհի Գանձաքարի հատվածում ճանապարհաշինարարները ճանապարհի եզրին ամրացնող գաբիոններ են տեղադրել, նրանք մեծ ծավալով աշխատում են ճանապարհի մյուս՝ Իծաքարի հատվածում: Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչները հայտնեցին, որ «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպությունն Իծաքարում արդեն կատարել է 1,5 կիլոմետր երկարությամբ՝ Իծաքարի գլխավոր փողոցի մայթերի եւ ջրահեռացման համակարգի կառուցումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՀԱԶԱՆԳԵՐ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՞ՒՐ Է «ԱՆՀԵՏԱՑԵԼ» ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն Էջմիածնի բնակիչներից ահազանգեր են ստացվել այն մասին, որ վարձակալությամբ տրվող բնակարանների գները կտրուկ թանկացել են:

Մեզ հետ զրույցում բնակիչը, ով ահազանգել էր դեպքի մասին, ասաց, որ վարձակալության գները 70.000-80.000 դրամից շեշտակի դարձել են 200-250.000 դրամ:

Բացի վերը նշված խնդրից՝ բնակիչները այլ խնդիրներ էլ նշեցին, որոնցից են Էջմիածին քաղաքի աղբահանությունն ու ջրամատակարարումը:

Ահազանգող քաղաքացու խոսքով՝ ջրամատակարարումը 24 ժամի փոխարեն դարձել է 17 ժամ, սակայն ժամանակ առ ժամանակ նշված 17 ժամի փոխարեն ավելի կարճ ժամանակով է մատակարարվում ջուրը:

Հիշեցնենք, որ այս խնդիրը կա նաեւ մայրաքաղաքում եւ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն մեր գրավոր հարցմանը պատասխանել էր, որ մայիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ջրամատակարարումը պետք է իրականացվի 17 ժամյա ռեժիմով՝ 07:00-24:00 ժամերին: Նշված ժամանակացույցը կազմվել է՝ հաշվի առնելով ընկերության ներկայիս տեխնիկական հնարավորությունները:

Ինչ վերաբերում է աղբահանությանը՝ քաղաքացին նշեց, որ աղբահանությունը լավ չի իրականացվում, ինչը եւս անհանգստացնում է բնակիչներին:

Այս խնդրով կապ հաստատեցինք Վաղարշապատի համայնքապետարանի մամուլի խոսնակ Սիրանուշ Գեւորգյանի հետ՝ պարզելու՝ արդյո՞ք այս խնդիրներով համայնքապետարանը վերահսկողություն իրականացնում է, թե՞ ոչ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սիրանուշ Գեւորգյանն ասաց, որ նշված խնդիրներից միայն աղբահանությունն է համայնքապետարանի վերահսկողության ներքո:

«Ձեր նշածներից միայն աղբահանությունն է համայնքապետարանի վերահսկողության տակ: Թե՛ բնակարանների վարձերի թանկացումը, թե՛ ջրամատակարարումը մեր ենթակայության տակ չէ: Աղբահանության հետ կապված էլ ասեմ, որ տարվա սկզբից մենք ունենք նոր աղբամաններ ու մեքենաներ, աղբահանությունը կատարվում է, եթե չասեմ իդեալական, ապա շատ լավ: Աղբահանության մասով կոնկրետ բողոքներ մենք չունենք: Երբեմն լինում է, որ կոնկրետ հասցեում կուտակում շատ է լինում, եւ մենք աղբահանությունը 2 անգամ ենք իրականացնում»,- ասաց Սիրանուշ Գեւորգյանը:

Կարելի է ենթադրել, որ բացի աղբահանությունից՝ վերը նշված երկու խնդիրները, այն է՝ բնակարանների վարձակալության գների թանկացումն ու ջրամատակարարումը վերահսկողությունից դուրս են գտնվում, այսինքն՝ ամեն բան բարձիթողի իրավիճակում է:

Ի դեպ, նշենք, որ Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանին արդեն տեւական ժամանակ է փնտրում են, զանգահարում՝ քաղաքացիների բողոքը ներկայացնելու համար, սակայն տիկին քաղաքապետը, կարծես, «անհետացած» լինի, նրան գտնելը դարձել է անհնարին: Նրա ղեկավարած քաղաքն անհուսալի վիճակում է, իսկ քաղաքապետը վայելում է կյանքը՝ կարծես, թե ո՛չ խնդիրներ կան, ո՛չ էլ դրանք իրեն են վերաբերում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԱԱ-Ն ԽՈՐԱՑՆՈՒՄ Է ԿԱՊԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Սույն թվականի հուլիսի 8-ին ՀՀ Գիտություններեի ազգային ակադեմիան հյուրընկալեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի պատվիրակությանը՝ համալսարանի նախագահ, պրոֆեսոր Շինչանգ Հանի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին եւ հանդիպման մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց. «Ձեր այցը մեծ հնարավորություն է քննարկելու մեր երկրների գիտակրթական համագործակցության նոր ոլորտները»:

Ակադեմիկոս Սաղյանն անդրադարձավ 2020 թվականին՝ Covid-19 համավարակի ժամանակ, Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի եւ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի միջեւ համագործակցությանը: «Մեր գործընկերները մասնագիտական աջակցություն ցուցաբերեցին վարակումը բացահայտող PCR (ՊՇՌ) թեստերի արտադրության կազմակերպման գործում: Իսկ 2023 թվականին Չինաստանի եւ Հայաստանի գիտությունների ակադեմիաների միջեւ ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: Կա մեծ ներուժ ընդլայնելու այս համագործակցությունը, մասնավորապես՝ գենետիկական հիվանդությունների վաղ ախտորոշման եւ կանխարգելման համար գենետիկական ախտորոշիչ եւ սքրինինգային թեստերի, ինչպես նաեւ հիվանդությունների բուժման բջջային եւ գենային թերապիայի մոտեցումների մշակման գործում», - ասաց Աշոտ Սաղյանը:

Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի նախագահ, պրոֆեսոր Շինչանգ Հանը ներկայացրեց համալսարանի գործունեությունը: Նա կարեւորեց հայկական կողմի հետ համագործակցությունը եւ դրա զարգացումը:

Պատվիրակության կազմում էր համալսարանի Կենսաբժշկության քոլեջի Սուջոու Բիոբեյ կենսատեխնոլոգիական տեխնոպարկի ռեզիդենտ, «RocRock Biotechnology» ընկերության հիմնադիր-տնօրեն, պրոֆեսոր Շուշան Ցինը, ով ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի կողմից ՊՇՌ թեստերի արտադրության տեղայնացման ընթացքում տրամադրել է մասնագիտական, տեխնիկական եւ լոգիստիկ օժանդակություն: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը պրոֆեսոր Շուշան Ցինին իր ներդրման համար շնորհեց ՀՀ ԳԱԱ հոբելյանական մեդալ:

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը նշեց, որ Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի հետ համագործակցությունը շարունակվելու է՝ ընդգրկելով քաղցկեղի եւ գենետիկ հիվանդությունների մոլեկուլային ախտորոշման եւ բուժման մեթոդների մշակման ոլորտները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 24 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է հունիսի 1-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ- հետախուզական միջոցառումների արդյունքները:

34 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու՝ ընդհանուր 9.202.456 ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 50.269.000 ՀՀ դրամ:

24 դեպքով կազմվել են ապօրինի գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 24.212.900 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 14.493.536 ՀՀ դրամ:

12 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 15.245.000 ՀՀ դրամ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏԱՐՏԱՓՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՀԱՄԱՐ

WITSA-ի համաշխարհային գավաթի ազգային հանձնաժողովը սկսում է դիմումների ընդունումը՝ հայկական վաղ փուլերի (early stage) ստարտափներին ընձեռելով բացառիկ հնարավորություն՝ ցուցադրելու իրենց նորարարական լուծումները եւ մրցելու՝ Հայաստանը միջազգային հարթակում ներկայացնելու համար:

Դիմումների ընդունման ժամկետը մեկնարկել է 2024 թվականի հուլիսի 3-ից եւ ավարտվելու է հուլիսի 31-ին:

Հայկական early stage/pre-series A ստարտափները կարող են դիմել եւ մասնակցել մրցույթին:

Ազգային հանձնաժողովը կընտրի մոտ 20 ընկերություններ, որոնցից երկուսը եզակի հնարավորություն կունենան Հայաստանը ներկայացնելու WITSA World Cup միջազգային մրցույթում:

WITSA-ի համաշխարհային գավաթի մրցանակաբաշխությունը (WITSA World Cup (WWC)) տեղի կունենա WCIT2024/DigiTec-ի շրջանակներում Երեւանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, 2024 թվականի հոկտեմբերին:

ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ՝ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՀԱՄԱՐ

Team Systems ընկերությունը ներկայացրեց իր նոր՝ Smart Place միջավայրերի ավտոմատացման համակարգերը, որտեղ համախմբված են բնակարանների, առանձնատների, հյուրանոցների ու կոմերցիոն տարածքների համար խելացի լուծումներ առաջարկող համաբխարհային առաջատարների ապրանքները:

Smart Place-ի նպատակն էներգաարդյունավետ ու հարմարավետ ապրելակերպի տարածումն է Հայաստանում: «Այս լուծումների շնորհիվ ցանկացած միջավայր կդառնա խելացի՝ ջեռուցումից, էլեկտրական սարքերից ու լուսավորությունից մինչեւ աուդիո եւ վիդեո համակարգերի կառավարում, որոնք բոլորը ինտեգրված են եւ աշխատում են սիմբիոզի մեջ՝ զուգահեռաբար կրճատելով էներգիայի սպառման ծախսերը»,-շնորհանդեսի ընթացքում նշեց Team Systems ընկերության տնօրեն Նելլի Մալյանը:

Smart Place-ի գլխավոր մատակարարը HDL տեխնոլոգիական կոնցեռնն է, որն արդեն երեսուն տարի մասնագիտացած է այս ոլորտի զարգացման, ներդրման ու կառավարման հարցերում՝ իրականացնելով համաշխարհային մասշտաբի նախագծեր, ինչպիսիք են՝ Ջահա Հադիդի ֆանտաստիկ «Մորֆիուս» հյուրանոցային համալիրը, ՆԱՏՕ-ի գլխավոր գրասենյակը, Դուբայի օդանավակայանը, «Մարիոթ», «Հիլթոն», «Վինդհեմ» ցանցերի հարյուրավոր հյուրանոցներ եւ այլն:

Միջոցառման ընթացքում HDL ընկերության գործունեությունը ներկայացրին խելացի լուծումների ղեկավար Միշել Ջյան եւ միջազգային վաճառքների ղեկավար Սառա Սուն:

«Իսկապես տպավորված եմ խելացի լուծումների կիրառման հայկական փորձով»,- ասում է Միշել Ջյան եւ, նկարագրելով իրենց առաջարկած լուծումների ազդեցությունը կենցաղում, շարունակում է. «Պատկերացրեք՝ ծանր ու հոգնեցուցիչ աշխատանքային օրվա վերջում տուն եք վերադառնում, այն պահից սկսած, երբ բացում եք տան դուռը, միանում է ձեզ հարմար լուսավորություն, ջերմաստիճանը կարգավորվում է ձեր նախընտրությամբ, աուդիո համակարգը նվագում է ձեր երգացանկը եւ այլն: Ասես տունը գրկաբաց դիմավորում է տանտիրոջը: Սա այն է, ինչ մենք անում ենք մարդու կյանքն իդեալական դարձնելու համար, իսկ ձեզ մնում է վայելել»:

Հաշվի առնելով խելացի լուծումների բարձր որակն ու հասանելիությունը՝ դրանք նախատեսված են թե՛ տների, թե՛ գրասենյակների եւ թե՛ ամբողջական էներգաարդյունավետ խելացի շենքերի համար: Smart Place-ում ներառված են լուսավորություն, վարդակներ ու անջատիչներ, ջեռուցում, հովացում ու օդափոխություն, դռների, պատուհանների, շերտավարագույրների ավտոմատացում, ապակիների թափանցիկություն, աուդիո եւ սմարթ TV համակարգեր, տնային կինոթատրոն, հեռուստատեսություն ու անգամ այգիների ջրամատակարարում ու շատ ավելին, եւ այս ամենը՝ լիովին ավտոմատացված, հստակ, վստահելի ու ապահով: Բացի սենսորային վահանակներից եւ բջջային հավելվածից, համակարգն ունի նաեւ ձայնային կառավարում, որը հնարավոր է իրականացնել Yandex-ի՝ Ալիսա, Apple-ի՝ Սիրի, Amazon-ի՝ Ալեքսա եւ Google օգնական համակարգերի միջոցով:

Միջոցառմանը մասնակցում էին ճարտարապետական ստուդիաների, շինարարական ընկերությունների ներկայացուցիչներ ու ինտերիեր դիզայներներ, ինչպես նաեւ գործարար աշխարհի շատ ներկայացուցիչներ, ովքեր կարող են հետաքրքրված լինել բնակարաններում ու կոմերցիոն տարածքներում, ինչպես նաեւ հյուրանոցներում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ:

Ի դեպ, Team Systems ընկերությունը հուլիսի 15-ից մեկնարկելու է անվճար ուսուցողական հանդիպումներ խելացի լուծումներով նախագծերով հետաքրքրվող պրոֆեսիոնալ համայնքի ներկայացուցիչների հետ՝ ծանոթացնելու Smart Place-ում առկա բոլոր լուծումները, որպեսզի իրենց նախագծերում հաշվի առնեն բոլոր մանրուքները:

Team Systems ընկերությունը Թիմ ընկերությունների խմբի անդամ է: Այն հանդիսանում է էլեկտրական եւ ցածրահոս համակարգերի նախագծման ու իրականացման ոլորտում առաջատար ընկերություններից մեկը: Team Systems-ը HPE, Lenovo, Cisco, APC, Siemon, Huawei, HDL եւ բազմաթիվ այլ համաշխարհային հսկաների պաշտոնական գործընկերն է Հայաստանում: Ընկերությունը կառուցում եւ սպասարկում է էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանց ամբողջ Հայաստանում, ինչպես նաեւ իրականացնում է «խելացի տուն, գրասենյակ, հյուրանոց» համակարգերի մշակում եւ իրագործում:

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

ՏԵԼԵԳՐԱՄՅԱՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

«Կասպերսկի» ընկերության փորձագետները ռուսալեզու օգտատերերից Telegram-ի օգտահաշիվների եւ կրիպտոարժույթի գողության սխեմա են հայտնաբերել: Օգտագործելով ֆիշինգային բոտ՝ ցանցահեները գրոհում են թվային ակտիվների սեփականատերերին, որոնք «մեսենջերում» կատարում են P2P առեւտրի գործարքներ (առեւտրի մի տեսակ, որի դեպքում օգտատերերը գործարքներ են կատարում ուղղակիորեն, առանց միջնորդների): Ընկերությունն արդեն մի քանի նման կեղծ բոտեր է հայտնաբերել:

«Կասպերսկի»-ի տվյալներով՝ ցանցահենները փնտրում են օգտատերերի, ովքեր ցանկանում են Telegram-ի միջոցով P2P առեւտրի շրջանակներում գործարքներ կատարել կրիպտոարժույթով, եւ նրանց հետ կապի մեջ են մտնում գործարքի իրականացման պատրվակով: Բայց ամենասկզբում պոտենցիալ զոհին հայտնում են, որ անվտանգության մակարդակը բարձրացնելու եւ կարգավորողների պահանջները պահպանելու համար իբր անհրաժեշտ է անցնել KYC ստուգում (ֆինանսական գործարքներ կատարելիս ինքնությունը հաստատելու կարգ), հակառակ դեպքում կրիպտոդրամապանակը կսառեցվի: Դա առաջարկում են անել «նույնականացման» հատուկ ծառայության միջոցով, որի հղումն ուղարկում են խարդախները: Իրականում այս կերպ նրանք մարդուն խաբեությամբ բերում են ֆիշինգային բոտ:

Հենց կրիպտոարժույթ ունեցողն անցնում է բնորոշ անվանումով Telegram բոտ (օրինակ՝ Wallet KYC), նրան առաջարկում են մուտք գործել իր Telegram հաշվի միջոցով: Դա անելու համար խնդրում են անջատել երկգործոն նույնականացումը «մեսենջեր»-ում եւ հաստատել այդ գործողությունը՝ սեղմելով համապատասխան կոճակը: Հետո պետք է հաղորդել Telegram մուտքի իրավազորման կոդը, որը կգա պաշտոնական ծառայությունից: Գործնականում այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի գողանան զոհի «մեսենջեր»-ի օգտահաշիվը եւ հնարավորություն ստանան նրա անունից P2P գործարքներ կատարելու: Telegram-ում անձի օգտահաշվի միջոցով խարդախները հասանելիություն են ստանում նրա Telegram Wallet կրիպտոարժույթի դրամապանակին: Արդյունքում առաջանում է ոչ միայն օգտահաշվին հասանելիությունը, այլեւ կրիպտոարժույթ կորցնելու ռիսկ:

«Համոզիչ լինելու համար չարագործները հաճախ վկայակոչում են օրենսդրության պահանջները՝ իրական եւ հորինված:

Օգտատերերը պետք է վերստուգեն տեղեկատվությունը նախքան զրուցակցի առաջարկին արձագանքելը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻ ՇԱՐՔ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆԸ ՄՄԽԵԼ Է ՖԻԼՄԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ

Լուծարման գնացող ազգային կինոկենտրոնը մսխել է 2024-ի ֆիլմերի ողջ բյուջեն եւ 2025-ի բյուջեի մի մասը: Այս մասին ահազանգում է «Ֆիլմարտադրողների Համահայկական Ֆեդերացիա» ՀԿ-ն:

Նրանց՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, նախագահ Վահագն Խաչատուրյանին եւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին ուղղված բաց նամակում ասվում է.

«Ֆիլմարտադրողների Համահայկական Ֆեդերացիա» ՀԿ խորհրդին հայտնի է դարձել, որ կինոյի պետական կառավարումը իրականացնող կառույցը՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը, խախտելով իր կանոնակարգը, 2024թ.-ի հունվարին, ֆիլմերի ֆինանսավորման առաջին մրցույթով, ծախսել է ՀՀ պետական բյուջեով 2024թ.-ի ֆիլմերի արտադրության համար նախատեսված ամբողջ գումարը:

Կինոկենտրոնը նաեւ պայմանագրեր է կնքել մեկ տասնյակից ավելի կինոարտադրողների հետ՝ ստանձնելով նրանց՝ թվով 12 կինոնախագծերի ֆինանսավորման պարտավորություններ, արդեն 2025թ.-ին նախատեսվող բյուջետային միջոցների հաշվին:

2024թ.-ի՝ ֆիլմերի ֆինանսավորման առաջին մրցույթը ամբողջությամբ արտացոլել է կինոկենտրոնի կառավարման մեջ արմատացած արատավոր բոլոր դրսեւորումները՝ արտոնյալ արտադրողների բազմակի ֆինանսավորումից մինչեւ կինոնախագծերի կրկնաֆինանսավորում:

Հաշվի առնելով այն, որ «Կինեմատոգրաֆիայի մասին ՀՀ Օրենքի» պահանջով, «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը ենթակա է լուծարման եւ 2024թ.-ի հունվարին անցկացրած մրցույթը այդ կառույցի կողմից կազմակերպվող վերջին մրցույթն էր, ֆիլմարտադրողների համահայկական ֆեդերացիան հիմքեր ունի կասկածելու, որ կինոկենտրոնը գերազանցել է իր լիազորությունները գիտակցաբար:

Կառույցը կուտակել է պարտքեր, կրկնաֆինանսավորել է ֆիլմեր, վատնել է 2024թ.-ի ողջ բյուջեն, 2025թ.-ի բյուջեի մի մասը, թույլ է տվել կանոնակագի մի շարք կոպիտ խախտումներ, անլուծելի թվացող այս խնդիրների ծանր բեռը թողնելով իր իրավահաջորդի՝ կինոյի պետական կառավարումն իրականացնող նորաստեղծ կառույցի՝ «Հայաստանի կինոյի հիմնադրամի» ուսերին:

Արդյունքում՝ վտանգված է 2024թ.-ին ֆիլմերի ֆինանսավորման երկրորդ մրցույթի անցկացումը՝ ֆիլմերի արադրության համար բյուջետային միջոցների սպառված լինելու պատճառով: Իսկ դա նշանակում է, որ երկրորդ մցույթին պատրաստ կինոնախագծերի հեղինակները ստիպված են խզել կամ սառեցնել միջազգային գործընկերների հետ կնքված պայմանագրերը, չեղարկել միջազգային հիմնադրամների աջակցության հայտերը, հրաժարվել իրենց արտադրական պլանից:

Տարեկան բյուջեն ժամկետից շուտ ծախսելու հիմնավորմամբ՝ պետական կինոկառույցի կանոնակարգով նախատեսված ֆիլմերի ֆինանսավորման մրցույթի չեղարկումը միջազգային կինոարտադրության մեջ չլսված, բացառիկ նախադեպ է: Դա ահռելի վնաս կհասցնի հայկական կինոարտադրությանը եւ Հայաստանի համբավին: Միանգամայն կանխատեսելի է նաեւ կինոյի մասնագիտական կառույցների, ֆոնդերի, պոտենցիալ ներդրողների խիստ բացասական արձագանքը:

«Ֆիլմարտադրողների համահայկական ֆեդերացիա» ՀԿ խորհուրդը դիմում է ՀՀ պատկան մարմիններին կոչով՝ քննարկել այս իրավիճակը եւ հանգուցալուծման ուղիներ գտնել, նաեւ ողջամիտ բացատրություններ պահանջել այս իրավիճակի պատասխանատուներից եւ ապահովել ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված, գործող կանոնակարգով ամրագրված, 2024թ.-ի երկրորդ մրցույթի անցկացումը:

Մենք պահանջում ենք՝

Ա) Կինոյի պետական կառույցի գործող կանոնակարգով ամրագրված ժամկետներում կազմակերպել 2024թ.-ի ֆիլմերի ֆինանսավորման երկրորդ (ամառային) մրցույթի անցկացումը:

Բ) Ապահովել 2024թ.-ի ֆիլմերի ֆինանսավորման երկրորդ մրցույթի անցկացման համար անհրաժեշտ, 2024թ.-ի ՀՀ պետական բյուջեով կինոնախագծերի ֆինանսավորման համար նախատեսված տարեկան գումարի ոչ պակաս, քան կեսի առկայությունը:

Գ) Ջերծ պահել «Կինեմատոգրֆիայի մասին ՀՀ Օրենքի» պահանջով ստեղծված «Հայաստանի Կինոյի հիմնադրամը» իր նախորդի՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի թույլ տված խախտումների արդյունքում կուտակած խնդիրներից, որոնք, ձեւավորման վաղ փուլում, կարող են կործանարար լինել նորաստեղծ կառույցի համար», - նշված է փաստաթղթում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՍԼԱՆԴԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ «ՆՈԱ»

«Նոային» է միացել Իսլանդիայի հավաքականի պաշտպան Գուդմունդուր Թորարինսոնը: Ֆուտբոլիստը կարիերան սկսել է հայրենի «Սելֆոսում», կարիերայի ընթացքում խաղացել է նորվեգական «Սարսբորգում», «Ռուսենբորգում», շվեդական «Նորչոպինգում», ամերիկյան «Նյու Յորք Սիթիում», դանիական «Օլբորգում»:

Երեւանյան թիմի նորեկը Շվեդիայի բարձրագույն լիգայում անցկացրած 84 խաղում դարձել է 4 գոլի հեղինակ, Նորվեգիայի բարձրագույն լիգայում 8 գոլ է խփել 83 խաղում, 2-ական գոլ է խփել Հունաստանի բարձրագույն լիգայում (44 խաղ) ու MLS-ում (41 խաղ): Իսլանդիայի ազգային հավաքականի կազմում Թորարինսոնն անցկացրել է 15 հանդիպում: 32-ամյա ֆուտբոլիստը «Նոա» է տեղափոխվել հունական «Կրետեից»:

«Շատ ուրախ եմ «Նոայի» մի մասնիկը դառնալու համար: Կներդնեմ ամբողջ ուժերս, որպեսզի օգնեմ թիմին՝ հասնելու մեր նպատակներին»,-«Նոային» միանալուց հետո ասել է իսլանդացի ֆուտբոլիստը:

ՌՈՆԱԼԴՈՒԻ ՇՈՒՐՋ ԱՌԿԱ ՍԿԱՆԴԱԼԻ ՄԱՍԻՆ

Բրիտանական BBC հեռուստաալիքը հայտարարություն է տարածել Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի շուրջ ծագած սկանդալի վերաբերյալ:

Եվրո-2024-ի 1/8-րդ եզրափակչի՝ Սլովենիայի դեմ Պորտուգալիայի խաղից հետո (0:0,3:0), հեռուստաալիքը ծաղրել է Ռոնալդուին, որը ավելացված ժամանակի առաջին խաղակեսի վերջում չի իրացրել 11 մետրանոցը: Ֆուտբոլիստի ազգանվան փոխարեն էկրանին է հայտնվել է «Misstiano Penaldo» գրվածքը:

«Վերնագիրն ուղղակի բառախաղ էր, ինչը մենք նախկինում բազմիցս արել ենք մեր Match Of The Day շոուի ժամանակ, ոչ մի վիրավորանք չի եղել: Մենք մի քանի անգամ դրական ենք արտահայտվել Ռոնալդուի մասին, այդ թվում, երբ Ժոզե Ֆոնտեն կարեւորել է Ռոնալդուի նվիրվածությունը խաղից առաջ մարզումներին՝ ասելով, որ այդ պատճառով նա պատմության լավագույններից մեկն է: Հետխաղյա 11 մետրանոցից հետո Գարի Լինեկերն ու Ալան Շիրերը գովել են Ռոնալդուի խիզախությունն ու հավատը՝առաջինը հարվածելու համար:

Այնուամենայնիվ, մենք հասկանում ենք, որ որոշ հեռուստադիտողներ դժգոհ են եղել գրվածքից եւ իրենց կարծիքը փոխանցել ենք պրոդյուսերական թիմին՝ օգնելու նրանց առաջ շարժվել»,- BBC-ի ներկայացուցչի խոսքերն է մեջբերում Daily Mail-ը:

Հիշեցնենք, որ Պորտուգալիան Եվրոյի 1/8-րդ եզրափակչում հաղթեց Սլովենիային (0:0, մետրանոցներ՝ 3:0), սակայն մրցաշարի քառորդ եզրափակիչում պարտվեց Ֆրանսիային եւ ավարտեց պայքարը (0:0, 3:5):

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՀԻՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է 1-ԻՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Լաուրա Գալստյանը ներկայացրել է Հայաստանը 11-րդ «Ischia» դաշնակահարների միջազգային մրցույթում եւ արժանացել է պատվավոր 1-ին մրցանակի: Մրցույթը տեղի էր ունենում Իտալիայի Լակկո-Ամենո կոմունայի Վիլլա Արբուստո թանգարանում:

Ժյուրիի կազմում էին նշանավոր երաժիշտներ՝ Օրացիո Մայոնեն (ժյուրիի նախագահ), Ալեքսանդր Հինչեւը, Կոնստանտինո Կատենան, Ֆեդերիկա Մոնտին եւ Ֆաբիո Բիանկոն:

Մասնակիցների աշխարհագրությունը լայն էր: Մասնակիցներ կային Իտալիայից, Հարավային Կորեայից, Ճապոնիայից, Գերմանիայից, Ուկրաինայից, Թուրքիայից եւ այլ երկրներից:

Լաուրան առաջին փուլի իր ծրագրում ներառել էր Սկրյաբինի եւ Շոպենի, իսկ երկրորդ փուլում՝ Բեթհովենի, Բախի եւ Բաբաջանյանի ստեղծագործություններից: Լաուրային շնորհվել է նաեւ մրցույթի հատուկ մրցանակը, որի շրջանակներում նա մենահամերգով հանդես կգա «Ischia Classica Festival»- ի շրջանակներում:

Լաուրան հանդիսանում է բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր: Վերջերս արժանացել է «Laszlo Spezzaferri» միջազգային երաժշտական մրցույթում 1-ին մրցանակին: Նաեւ հանդիսանում է «Պիետրո Արջենտոյի» անվան 24-րդ երաժիշտ-կատարողների մրցույթի, «Great Masters՝ Վլադիմիր Հորովից» դաշնակահարների միջազգային մրցույթի, Վիեննայի միջազգային արվեստների փառատոնի, «Մելոս» միջազգային մրցույթների հաղթող:

Նշենք, որ 20-ամյա Լաուրա Գալստյանը սովորում է Մանհայմի (Գերմանիա) երաժշտության եւ կատարողական արվեստների պետական համալսարանում՝ Վոլֆրամ Շմիթ-Լեոնարդիի դասարանում:

2024 թվականի ընթացքում «Weltklassik am Klavier» ընկերության կողմից կազմակերպվել են մի շարք մենահամերգներ Գերմանիայի տարբեր քաղաքներում:

Ինչպես նշում է Լաուրան՝ «Անչափ ուրախ եւ հպարտ էի, որ կարողացա եւս մեկ անգամ Հայաստանը պատվով ներկայացնել միջազգային հարթակներում: Մեր հաղթանակները առավել քան կարեւոր են այսօր եւ հուսով եմ, որ դրանք կլինեն շարունակական»:

● Հուլիսի 14-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ինչ տարբերություն, թե ում հետ» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես եւ որ լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստատությունում:

Անի Մխիթարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու, ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):

Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Սիրան Մնացականյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ուսանող մարզիկները կմասնակցեն Եվրոպական համալսարանական խաղերին: Ինչպես նշվում է՝ Հայաստանը 8 մասնակից կունենա հուլիսի 12-24-ը Հունգարիայի Դեբրեցեն եւ Միշկոլց քաղաքներում անցկացվելիք Եվրոպական համալսարանական խաղերում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+7 +12	+25 +29
Կոտայքի լեռներ	+8 +10	+24 +27
Կոտայքի նախալեռներ	+19 +21	+30 +33
Գեղարքունիք	+7 +11	+24 +28
Լոռի	+9 +14	+25 +28
Տավուշ	+14 +19	+29 +33
Արագածոտնի լեռներ	+7 +9	+23 +27
Արագածոտնի նախալեռներ	+16 +20	+29 +33
Արարատ	+19 +21	+34 +36
Արմավիր	+18 +20	+34 +36
Վայոց ձորի լեռներ	+8 +10	+24 +27
Վայոց ձորի նախալեռներ	+17 +19	+33 +35
Սյունիքի հովիտներ	+18 +21	+31 +34
Սյունիքի նախալեռներ	+12 +16	+25 +28
ԼՂՀ	+12 +15	+24 +26
Երեւան	+22 +24	+32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*